

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» Միութիւնը
Չ՝ ուզեր Հրաժարիլ իր Երազէն

NEVER GIVE UP ON A DREAM

Ինչպէս գիտէք, վերջին տարիները եղան ծանր, դատական պայքարի տարիներ, Լոս Անճելըսի «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» Միութեան համար: Մեր արդար խղճի ձայնին անսալով, փորձեցինք Մելգոնեան Եղբայրներու կտակին սահմանումը եւ Մ. Կ. Հաստատութեան պատկանելիութիւնը ճշդել դատարանի միջոցով, միեւնոյն ատեն ամէն ճիգ ի գործ դրինք արգիլելու համար Հաստատութեան կալուածներուն վաճառքը ՀԲԸՄի կողմէ: Արդարեւ Կիպրոսի Սանուցի անկլուն ջանքերուն շնորհիւ Կիպրոսի կառավարութիւնը յատուկ հրամանագրով մը, Մարտ 31, 2008ին հաստատեց Մելգոնեան շէնքերուն եւ 40 էջըր ընդհանուր հողատարածքին 60 տոկոսին անձեռնմխելիութիւնը՝ որպէս Ազգային Ժառանգութիւն, իսկ յարակից պուրակը՝ որպէս Կանաչ Գօտի: Այս ձեռով ակնյայտ է որ դիւրին պիտի չ'ըլլայ կալուածները վաճառել, քանի որ օրէնքը նոյնպէս կ'արգիլէ կալուածներու որեւէ ձեւափոխում:



Արտասահմանի հայութիւնը կարիքը ունի համահայկական երկրորդական գիշերօթիկ հաստատութեան մը ուր պահպանուի մայրենի լեզուն, Հայոց պատմութիւնը եւ հայ մշակոյթը: Եւրոպայի կարգ մը մեծահարուստ հայ գործատէրեր որոշած են թիկունք կենալ՝ Մելգոնեանը վերաբանալու համար տարուող աշխատանքներուն, նիւթական մեծագումար ներդրումներ կատարելու յանձնառութեամբ, քանի որ անոնք կը գիտակցին թէ՛ Սփիւռքի մէջ առանց Հայ դպրոցի եւ հայեցի դաստիարակութեան կարելի չէ հայապահպանումի գործը յառաջ տանիլ եւ Արեւմտահայերէնը, հայ գիրն ու գրականութիւնը վերջիվերջոյ դատապարտուած կ'ըլլան անհետացման:

Այս կապակցութեամբ անցեալ տարի Փետրուար 28-ին Զուիցերիոյ ժընե քաղաքին մէջ հանդիպում մը ունեցանք Եւրոպայի մեր գործատէր բարեկամներու հրաւերով որպէսզի միասնաբար կարենանք մեր հետագայ գործունէութեանց ուղիները որոշել: Այս հանդիպումին մասնակցեցան Մելգոնեան Սանուցներու ներկայացուցիչներ՝ ԱՄՆ-էն, Գանատայէն, Կիպրոսէն, Լիբանանէն, Անգլիայէն եւ Գերմանեայէն: Որոշում առնուեցաւ կազմել կեդրոնական միացեալ մարմին մը ներկայ ժողովականներով եւ ընտրել մէկը որ համադրէ եւ տնօրինէ այս նոր կազմակերպութեան աշխատանքները: Որոշուեցաւ այս նոր կազմակերպութիւնը կոչել «Միջազգային Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» անունով եւ ԱՄՆ-էն Զօհրապ Ծամմասեան նշանակուեցաւ որպէս գործադիր տնօրէն:

